# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԱԾՁԲ-20-2-1

ք. Երևան 01.04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Պատվիրատու», մի կողմից և «ՌԱԴՎԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Մկրտչյանի, որը գործում ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ՝ № 17 զինվորական ներկայացուցչի կողմից տված եզրակացության հիման վրա: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԱԾՁԲ-20-2-1**

ք. Երևան .04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Պատվիրատու», մի կողմից և «ՌԱԴՎԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ. Հակոբյանի, որը գործում ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ՝ № 17 զինվորական ներկայացուցչի կողմից տված եզրակացության հիման վրա: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 45000000 (քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված **է 10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն Պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ պատրաստության գլխավոր վարչությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԶՅԱՆ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«ՌԱԴՎԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Սիլիկյան թաղամաս 5-րդ փ. Տ.58
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500603578200
ՀՎՀՀ 01835789
Տնօրեն

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

*Հավելված N 1*
**N ՄԱԾՁԲ-20-2-1** *պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Անվանումը | Չափ. միավ. | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|---|
| 1. | համալիր վարժասարքերի նորոգում (S-72 տանկի և ՀՄՄ-2 համալիր վարժասարքերի նորոգում) | դրամ | Համաձայն վարժասարքերի շահագործման ձեռնարկի պահանջների, վարժասարքերի աշխատունակության լրիվին ապահովում: |

Ծանոթագրություն.
Նորոգման ընթացքում փոխարինվող սարքավորումները (դետալները) պետք է լինեն նոր և չօգտագործված, ձեռք են բերվում նորոգումն իրականացնող կազմակերպության կողմից:
Նորոգումն իրականացվում է ՀՀ ԶՈՒ ՊԳ վարչության հայտերի հիման վրա, ըստ փաստացի պահանջարկի, ընկերության արհեստանոցում, կամ վարժասարքի շահագործման վայրում:
Նորոգվող և փոխարինվող սարքավորումների (դետալների) համար պահանջվում է մեկ տարվա երաշխիք:

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Անվանումը | Չ/մ | Նորոգման ծառայությունները ըստ ՊԳՎ հայտերի՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշ 10.12.2020թ. |
|---|---|---|---|
| | | | Առավելագույն գումարը (ՀՀ դրամ) |
| 1 | Համալիր վարժասարքերի նորոգում (S-72 տանկի և ՀՄՄ-2 համալիր վարժասարքերի նորոգում) | Դրամ | 45,000,000 |
| Այդ թվում՝ | | | |
| Հ/Հ | Անվանումը | Չ/մ | Առավելագույն գինը |
| Հրահանգչի մոդուլ | | | |
| 1 | Հրահանգչի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625,000 |
| 2 | Հրամանատարի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625,000 |
| 3 | Նշանառու-օպերատորի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625,000 |
| 4 | Մեխանիկ վարորդի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625,000 |
| 5 | Հոսանքի անխափան սնուցման սարքի փոխարինում | հատ | 50,000 |
| 6 | Բարձրախոս համակարգի փոխարինում | հատ | 37,800 |
| 7 | Մոնիտորների ինտերֆեյսային փոխարկիչների փոխարինում | հատ | 15,000 |
| Մարտական բաժանմունքի մոդուլ | | | |
| *Ա. Հրամանատարի մոդուլ* | | | |
| 1 | Մոնիտորների ինտերֆեյսային մալուխների փոխարինում | հատ | 11,400 |
| 2 | TKH-3 սարքի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 111,220 |
| 3 | Աջ բաժանարար վահանակի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 12,350 |
| 4 | KA-1C սարքի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 6,940 |
| 5 | Բեռնավորման վահանակի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 21,220 |
| 6 | БВ-34 սարքի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 2,500 |
| 7 | MT2 սարքի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 2,500 |
| 8 | Հրամանատարի մոդուլի էլեկտրոնային բլոկի արդիականացում | հատ | 1,118,120 |
| *Բ. Նշանառու օպերատորի մոդուլ* | | | |
| 1 | 1A40 սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 319,460 |
| 2 | 1K13 սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 75,000 |
| 3 | Թնդանոթի վերելքի սարքի իմիտատորի տվիչների փոխարինում | հատ | 64,450 |
| 4 | Աշտարակի շրջադարձի սարքի իմիտատորի տվիչների փոխարինում | հատ | 64,450 |
| 5 | Ազիմուտային ցուցիչ շարժիչի փոխարինում, էլեկտրոնային արդիականացում | հատ | 67,800 |
| 6 | Կացյոնիկի լարաբերման մեխանիզմի տվիչների և մեխանիզմի փոխարինում | հատ | 162,950 |
| 7 | A3 կառավարման վահանակի էլեկտրոնային արդիականացում | հատ | 251,680 |
| 8 | Կողային գործակիցների բլոկի էլեկտրոնային արդիականացում | հատ | 7,920 |
| 9 | Ձախ բաժանարար վահանակի էլեկտրոնային արդիականացում | հատ | 12,360 |

| | | | |
|---|---|---|---|
| 10 | БВ-35 սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2,500 |
| 11 | Ճշգրտումների ներմուծման սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 4,180 |
| 12 | Կառավարման վահանակ 902-ի էլեկտրոնային արդիականացում | հատ | 16,530 |
| 13 | МТ2 սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2,500 |
| 14 | Մոնիտորների ինտերֆեյսային մալուխների փոխարինում | հատ | 11,400 |
| 15 | Նշանառու օպերատորի էլեկտրոնային բլոկի արդիականացում | հատ | 1,500,000 |
| Կառավարման մոդուլ | | | |
| 1 | Դինամիկ հարթակի տվիչների փոխարինում | հատ | 212,980 |
| 2 | Դինամիկ հարթակի շարժիչ ռեդուկտորի վերանորոգում | հատ | 150,000 |
| 3 | Դինամիկ հարթակի շարժիչ ռեդուկտորի փոխարինում | հատ | 2,500,000 |
| 4 | Դինամիկ հարթակի փոխարկիչների փոխարինում | հատ | 160,000 |
| 5 | Դինամիկ հարթակի էլեկտրոնային բլոկի արդիականցում | հատ | 807,900 |
| 6 | Մոնիտորի ինտերֆեյսային մալուխի փոխարինում | հատ | 11,400 |
| 7 | Օդային բալոնի իմիտատորի տվիչներիի փոխարինում | հատ | 32,400 |
| 8 | Փոխանցման տուփի իմիտատորի տվիչներիի փոխարինում | հատ | 32,400 |
| 9 | БВ37 սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2,500 |
| 10 | Օդամղիչ սարքի իմիտատորի տվիչներիի փոխարինում | հատ | 32,400 |
| 11 | Ոտնակ ( Педаль Подачи Топлива) տվիչի փոխարինում | հատ | 32,400 |
| 12 | Ոտնակ ( Педаль Сцепления) տվիչի փոխարինում | հատ | 32,400 |
| 13 | Ոտնակ ( Педаль Тормоза) տվիչի փոխարինում | հատ | 32,400 |
| 14 | МТ2 սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2,500 |
| 15 | Հովացման մեխանիզմի իմիտատորի տվիչի փոխարինում | հատ | 32,400 |
| 16 | Շրջադարձի բռնակի տվիչի փոխարինում | հատ | 32,400 |
| 17 | Վառելիքային ծորակի տվիչի փոխարինում | հատ | 32,400 |
| 18 | Վառելիքի մատուցման մեխանիզմի տվիչի փոխարինում | հատ | 32,400 |
| 19 | РНМ սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 32,400 |
| 20 | Մեխ/վարորդի ստուգիչ սարքերի վահանակի էլեկտրոնային արդիականցում | հատ | 633,600 |
| 21 | Մեխանիկ վարորդի էլեկտրոնային բլոկի արդիականացում | հատ | 1,613,410 |
| 22 | Ծավալային մոնտաժ՝ կեմերի փոխարինում | հատ | 664,410 |
| 23 | Վարժասարքի ապամոնտաժում/մոնտաժում/կարգաբերում | կ-տ | 2,500,000 |
| 24 | Վարժասարքի տեղափոխում վերանորոգման նպատակներով | կմ | 1,400 |
| Համալիր վարժասարքերի նորոգում (ՀՄՄ-2 համալիր վարժասարքերի նորոգում) | | | |
| Այդ թվում | | | |
| Հ/Հ | Անվանումը | Չ/մ | Գինը |
| Հրահանգչի մոդուլ | | | |
| 1 | Հրահանգչի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625,000 |
| 2 | Հրամանատարի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625,000 |
| 3 | Նշանառու-օպերատորի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625,000 |
| 4 | Մեխանիկ վարորդի համակարգչային բլոկի Օպերացիոն համակարգի հզորացում | հատ | 625,000 |
| 5 | Հոսանքի անխափան սնուցման սարքի փոխարինում | հատ | 50,000 |
| 6 | Բարձրախոս համակարգի փոխարինում | հատ | 37,800 |
| 7 | Մոնիտորների ինտերֆեյսային փոխարկիչների փոխարինում | հատ | 15,000 |
| Մարտական բաժանմունքի մոդուլ | | | |
| *Ա. Հրամանատարի մոդուլ* | | | |
| 1 | Մոնիտորների ինտերֆեյսային մալուխների փոխարինում | հատ | 11,400 |
| 2 | ТКН-3 սարքի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 111,220 |
| 3 | Կայունարար վահանակի էլեկտրոնային արդիականացում | հատ | 251,670 |
| 4 | 1П3- սարքի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 85,000 |
| 5 | Կայունարար վահանակի էլեկտրոնային արդիականացում | հատ | 251,670 |
| 6 | БВ-34 սարքի իմիտատորի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 2,500 |
| 7 | МТ2 սարքի էլեկտրոնային մասնակի արդիականացում | հատ | 2,500 |
| 8 | Աշտարակի կանգնակի տվիչի փոխարինում | հատ | 32,400 |
| 9 | Հրամանատարի մոդուլի էլեկտրոնային բլոկի արդիականացում | հատ | 894,500 |
| *Բ. Նշանառու օպերատորի մոդուլ* | | | |
| 1 | Դինամիկ հարթակի վերանորոգում | հատ | 1,805,720 |
| 2 | Դինամիկ հարթակի շարժիչ ռեդուկտորի փոխարինում | հատ | 3,000,000 |
| 3 | БПК 2-42 սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 170,000 |
| 4 | Թնդանոթի վերելքի սարքի իմիտատորի տվիչների փոխարինում | հատ | 64,450 |
| 5 | Աշտարակի շրջադարձի սարքի իմիտատորի տվիչների փոխարինում | հատ | 64,450 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | Ազիմուտային ցուցիչ շարժիչի փոխարինում, էլեկտրոնային արդիականացում | հատ | 67,800 | |
| 7 | Կացյոնիկի լարաբերման մեխանիզմի տվիչների փոխարինում | հատ | 50,000 | |
| 8 | Կայունարար վահանակի էլեկտրոնային արդիականացում | հատ | 251,680 | |
| 9 | БВ-35 սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2,500 | |
| 10 | БУ-25-2С սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 250,000 | |
| 11 | 902 Կառավարման վահանակի էլեկտրոնային արդիականացում | հատ | 16,530 | |
| 12 | КР-60 սարքի իմիտատորի էլեկտրոնային արդիականացում | հատ | 16,530 | |
| 13 | ПКТ իմիտատորի տվիչների փոխարինում | հատ | 14,250 | |
| 14 | МТ2 սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2,500 | |
| 15 | Օդային բալոնի իմիտատորի տվիչներիի փոխարինում | հատ | 32,400 | |
| 16 | Մոնիտորների ինտերֆեյսային մալուխների փոխարինում | հատ | 11,400 | |
| 17 | Նշանառու օպերատորի էլեկտրոնային բլոկի արդիականացում | հատ | 950,000 | |
| Կառավարման մոդուլ | | | | |
| 1 | Դինամիկ հարթակի վերանորոգում | հատ | 1,805,720 | |
| 2 | Մոնիտորի ինտերֆեյսային մալուխների փոխարինում | հատ | 11,400 | |
| 3 | Օդային բալոնի իմիտատորի տվիչներիի փոխարինում | հատ | 32,400 | |
| 4 | Ղեկի և փոխանցման տուփի իմիտատորի տվիչներիի փոխարինում | հատ | 27,000 | |
| 5 | БВ37 սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2,500 | |
| 6 | Ոտնակ ( Педаль Подачи Топлива) տվիչի փոխարինում | հատ | 32,400 | |
| 7 | Ոտնակ ( Педаль Сцепления) տվիչի փոխարինում | հատ | 32,400 | |
| 8 | Ոտնակ ( Педаль Тормоза) տվիչի փոխարինում | հատ | 32,400 | |
| 9 | МТ2 սարքի էլեկտրոնային արդիականացում | հատ | 2,500 | |
| 10 | Հովացման մեխանիզմի իմիտատորի տվիչի փոխարինում | հատ | 32,400 | |
| 11 | Վառելիքային ծորակի տվիչի փոխարինում | հատ | 32,400 | |
| 12 | Վառելիքի մատուցման մեխանիզմի տվիչի փոխարինում | հատ | 32,400 | |
| 13 | Մեխ/վարորդի ստուգիչ սարքերի վահանակի էլեկտրոնային արդիականցում | հատ | 633,600 | |
| 14 | Մեխանիկ վարորդի էլեկտրոնային բլոկի արդիականացում | հատ | 500,000 | |
| 15 | Ծավալային մոնտաժ՝ կեմերի փոխարինում | հատ | 400,000 | |
| 16 | Վարժասարքի ապամոնտաժում/մոնտաժում/կարգաբերում - (տեղափոխման դեպքում) | հատ | 1,500,000 | |
| 17 | Վարժասարքի ապամոնտաժում/մոնտաժում/կարգաբերում | հատ | 2,500,000 | |
| 18 | Վարժասարքի տեղափոխում վերանորոգման նպատակներով | կմ | 1,400 | |
| Ծառայությունների մատուցման վճարումը կատարել ըստ փաստացի ծախսերի գնահաշվարկի: | | | | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՀՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«ՌԱԴՎԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ

Տնօրեն

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

*Հավելված N 2*
**N *ՄԱԾՁԲ-20-2-1*** *պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման ենթակա ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2020թ. պետական բյուջեից ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2020թ. ընդ որում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | համալիր վարժասարքերի նորոգում (S-72 տանկի և ՀՄՄ-2 համալիր վարժասարքերի նորոգում) | 15000000 | 15000000 | 15000000 | 30000000 | 30000000 | 30000000 | 45000000 | 45000000 | 45000000 |

CPV 50892000/1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«ՌԱԴՎԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ

Տնօրեն

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Պայմանագրի կողմ

____________________________________
____________________________________
գտնվելու վայրը ______________
հհ ____________________________
հվհհ __________________________

Պատվիրատու

____________________________________
____________________________________
գտնվելու վայրը ______________
հհ____________________________
հվհհ__________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

________________________________
ստորագրություն
________________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

________________________________
ստորագրություն
________________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը | Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________-ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը | պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

Հայաստանի Հանրապետություն

# ԱՐՏՈՆԱԳԻՐ

## № 291 U

*Հայաստանի Հանրապետության*
*մտավոր սեփականության գործակալությունը*
*օրենքի համաձայն տվեց*
*Տանկի համալիր վարժասարք*
*օգտակար մոդելի այս արտոնագիրը*

**ԱՐՏՈՆԱԳՐԱՏԵՐ** «ՌԱԶՎԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ

**ՀԵՂԻՆԱԿ(ՆԵՐ)** Ա. Ազիզյան

ՀԱՅՏ № AM20110149U

Ներկայացման թվականը 28.10.2011

Օգտակար մոդելի առաջնությունը 28.10.2011

Գրանցված է պետական
գրանցամատյանում 25.05.2012

Գործակալության պետ

*Արտոնագրի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում*

Հայաստանի Հանրապետություն

# ԱՐՏՈՆԱԳԻՐ

**№ 434 U**

*Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալությունը օրենքի համաձայն տվեց*

***ՀՄՄ-2-ի համալիր վարժասարք***

*օգտակար մոդելի սույն արտոնագիրը*

**ԱՐՏՈՆԱԳՐԱՏԵՐ** «Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ

**ՀԵՂԻՆԱԿ(ՆԵՐ)** Ռադիկ Վանիկի Վանունց

| | |
|---|---|
| **ՀԱՅՏԻ №** | AM20150018U |
| Ներկայացման թվականը | 24.02.2015 |
| Օգտակար մոդելի առաջնությունը | 24.02.2015 |
| Գրանցված է պետական գրանցամատյանում | 25.12.2015 |

Գործակալության պետ

Արտոնագրի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում